

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Հ Ա Ն Դ Է Ս

ժԵ. ԴԱՐԱԴԱՐՁԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Տեղի ունեցու Սրբոց Թարգմանչաց
Հինգշաբթի յաջորդող առաջին Կիրա-
կիին, Յուլիս 21, Ժառանգաւորաց Վար-
ժարանի մեծ սրահին մէջ, նոյն այն պատ-
շաճութիւններով, որոնցմով կատարուած
էր առաջինը՝ Ս. Սահակի տօնի վաղոր-
դայնի Կիրակիին, Մարտ 3ին:

Սրահը լեցուած էր ընտրեալ և հոծ
բազմութեամբ, երբ կէսօրէ վերջ ժամը
4ին, Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցու-
թեամբ բովանդակ Միաբանութեան, հոն
մտաւ:

«Տէր Կեցոյ՛ յազգային մաշթերգէն
առաջ, որ ունկնդրուեցաւ յոտնկայս,
Կարգադիր Յանձնախումբի կողմէ Տ. Սիոն
Վրդ. յոյժ վոյնելու ուղերձով մը կատա-
րեց հանդէսին բացումը: Ապա կէսառ կէտ
գործադրուեցաւ Յայտագիրը, զոր կ'ար-
տապենք հոս, լրիւ գաղափոր մը տալու
համար ամբողջ հանդէսին մօտին:

1) Բացման խօսք յանուն Յոբելին.
Յանձնախումբի՝ Տ. Սիոն Վրդ. Մանուկ-
եան: 2) «Տէր, Կեցո՛ւ դու զՀայս» (Մաղ-
թանք): 3) Գիրին Երբեակ խորհուրդը՝
Բանախօսութիւն՝ Ամեն. Ս. Պատրիարք
Հայր: 4) «Որք Զարդարեցին» (Շարական,
Քառածայն՝ դաշն. Պսակ Աբեղայ): 5)
Հատուած մը Կորինթի գիրքէն՝ Արտա-
սանութիւն՝ Աւետիք Մանուկեան: 6) «Ճաղ
Գրարար Լիզուի» (Վ. Թէքէեան)՝ Արտա-
սանութիւն՝ Ազատ Դէշիշեան: 7) «Ի Փառս
էին»՝ Խմբերգ: 8) «Հրաշքը», մեր օրերու
Տրամասութիւն (Յ. Օշական)՝ Արտասնթ.՝
Արմենակ Գույումճեան և Արեգ Բաբուր-

եան: 9) «Օշական» (Եղիշէ Արք. Դուր-
եան)՝ Արտասնթ.՝ Կարապետ Շիրինեան:
10) «Նմանեալ Մովսէսին» (Շարական): 11)
«Ս. Մեսրոպ» (Սիամանթօ)՝ Արտասնթ.՝
Ժիրար Մոզեան, Դրանիկ Ղազարեան և
խումբ: 12) Մաղթանք Հայրապետական
(Քառածայն՝ երաժշտ. Կոմիտաս Վրդ.ի):
13) Փակման խօսք՝ Նախագահ Ամեն. Ս.
Պատրիարք Հօր: 14) Աղօթք Տէրունական
(Քառածայն՝ դաշն. Կոմիտաս Վրդ.ի):

Շարականները, երգերը, միաձայն և
բազմաձայն, յաջորդակ կերպով եղանակե-
ցին ժառանգաւոր սաները, դաշնակի ըն-
կերակցութեամբ: Նոյնպէս անթերի եղան
նշանակուած արտասանութիւնները:

Սրբազան Պատրիարք Հօր բանախօ-
սութիւնը, որ տեւեց մէկ ժամ և մէկ քա-
ռորդ, ինչպէս և Պր. Օշականի գրած
արամասութիւնը, զոր երկու ժառանգա-
ւորներ, Արմենակ և Արեգ, կատարեցին
առողջ արտասանութեամբ, ամբողջովին
հրատարակուած են «Սիոն» յայտ թիւին
մէջ:

Յոյժ սրտաշարժ եղաւ Սիամանթոյի
«Ս. Մեսրոպ»-էն արտասանուած ընդարձակ
հատուածը, զոր աչակերտները կատարե-
ցին օրհնասացութեան փոխերգութեամբ:

Ժամը գրեթէ եօթն էր, երբ հանդի-
սականները բաժնուեցան սրահէն, յառա-
ջիկայ Հոկտ. 27ին կատարելի յոբելինո-
կան վերջին հանդէսը եւ իր ժամանակին
վայելելու քաղցր ակնկալութեամբ:

(«Սիոն», 1985, Թ. Յարի, Օգոստոս,
Թիւ 8, էջ 259): Վ